

24599

# ՀԱՆՎՈՐՈՒԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎՅՈՒԳՈ

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՅԵՆ  
ԾԱԽՍՎՈՒՄ ԱՐՔԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ  
ՎՃԱՐՆԵՐԸ

331.88

Կ-73

ԴԱՄԱ

12 AUG 2013

15 JAN 2010

ԲԱՆԳՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

331.38

Կ-73.

մը

ՎՅՈՒԳՈ

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՅԵՆ  
ԾԱԽՍՎՈՒՄ ԱՐՔԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ  
ՎՀԱՐՆԵՐԸ

ՀՀՀՀ

3399

3340



14940-17

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՅԵՆ ՇԱԽՄ-  
ՎՈՒՄ ԱՐԳԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ.

Արհեստակցական միություններն իրենց ամբողջ աշխատանքները տանում են անդամավճաներից գոյացած գումարների հաշվին։ Միություննական կազմակերպությունները իրենց աշխատանքները տանելու համար վորև ուրիշ կազմակերպություններից նպաստներ չեն ստանում։

Հայաստանի արհեստակցական միությունները 1927 թ. ունեցել են ընդամենը լեկամուտ 431.642 ռ., վորից 351.356 ռ. գոյացել ե միության անդամների մուծած անդամավճարներից։ 1928 թ. միությունների յեկամուտը հավասար է լեղել 478.909 ռ. վորից անդամավճարներ 441.952 ռ.։ Ինչպես տեսնում եք միությունների բլուջելի լեկամտալին մասի մոտ  $86\%$  ը 27 թվին և  $92,3\%$  ը 28 թվին կազմում ե միության անդամներից գանձված անդամավճարներից։ Այս գրությունը պետք ե համարել միանգամյան բավարար։

Այս միջոցների հաշվին միությունները պահպանում են իրենց մարմինները, վարում են կուլտուրական աշխատանքներ, ոգնում են գործազուրկներին և այն և այն։ Անդամակցական վճարների մուծումների թուլացումը խոշոր

հրատ. № 1070

ԹԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառակ. № 2715(բ) Տիրաժ 4.000 Պատ. 1029

չափով անդրադառնում ե միությունական աշխատանքների վարձան նորմալ ընթացքին. այդիսկ տեսակետից անհրաժեշտ ե, վորպեսզի միության յուրաքանչյուր անդամ մուծի իր անդամավճարները լրիվ և ժամանակակիցն:

Անդամակցական վճարները՝ դա միությունական ապարատների պահպանման հիմնական ու միակ միջոցներն են, այս դրությունը պահանջում է, զորպեսզի միության լուրաքանչյուր անդամ լուրջ ուշադրություն դարձնի անդամակցական մուծելու գործի վրա:

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱ-  
ՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Անդամակցական վճարների մուծումը հաճ-  
դիսանու՞ն ե առաջին և հիմնական պարագորու-  
թյուններից մեկը, փորպիսին միության լուրա-  
քանչյուր անդամ կատարում ե միանգամայն  
կամովին. անդամակցական վճարները ժամանա  
կին չմուծողների նատմամբ միությունական  
մարմինները վո՞ւ պարտավորեցուցիչ միջոցներ  
չեն ձեռնարկում, այլ աշխատում են բացարա-  
կան և համոզեցուցիչ աշխատանքների միջոցով  
պարզաբանել միության լուրաքանչյուր անդամին  
անդամավճարները ժամանակին մուծելու նշա-  
նակությունն սիությունական աշխատանքների  
համար: Բացի արդ լուրաքանչյուր միության ա-  
նդամ չպետք է մոռանա, վոր միության կա-

Նոնադրության համապատասխան հոգվածի հիման  
վրա Յ ամիս անընդհատ առանց հարգելի պատ-  
ճառի անդամավճարներ չմուծողները համարվում  
են մեխանիքորեն միությունից հեռացված։ Այն  
անդամնագրքույկը, վորտեղ Յ ամիս անընդհատ  
չկա նշանակումներ անդամավճարներ մուծելու  
մասին կամ նշանակում գործազրկության մասին,  
մեխանիքորեն կորցնում են միության տոմսի  
նշանակությունն ու ուժը։

Միանգամայն պարզ ե, վոր միությունը չի կարող իր շարքերում համարել այնպիսի անդամներ, վորոնք իրենց ֆինանսական պարտավորությունը հանգեց միության չեն կատարում. Նման անդամներին միությունը չի հեռացնում, քանի վոր առանց այն ել իրենք այդ արարմունքով միության շարքերից սեխտանիքորեն առաջ քննության առնվելու համարվում են հեռացված:

Մեխանիքորեն հեռացվածը կարող է նորից  
անցնել միության շարքերը, սակայն այս գեպ-  
քուժ ընդհանուր հիմունքներով, մեխանիքորեն  
զուրս մնալու ժամկետից 1 ամիս հետո և այն  
ել կարող է ընդունվել միմիայն նոր ստաժով—  
կորցնելով իր նախկին ստաժը:

Այդ իսկ տեսակետից, վորպեսզի ֆինանսական պարտավորությունը չկատարելու պատճառով միության անդամը իրեն չդնի պրոլետարական շարքերից դուրս, չզրկվի իր հին ստաժից, վորպիսին սովորաբար նկատի յե առնվորմ միու-

թյունից նպաստ ստանալու ժամանակ և ընդհանրապես չըրկվի միության մողմից տրվելիք միշարք արտոնություններից, պետք ե լինի ճշտապահ հանդեպ միության այդ պարտականությունը և ժամանակին մուծի անդամագնարը կամ գործազրկության դեպքում ներկայանամիությանը նշանակումներ անելու համար:

Միության անդամ մուծիր ժամանակին բուանդամակցական վճարները, այդպիսով դու կնպաստես միությունական մարմինների աշխատանքի նորմալ ընթացքին յեվ կ'կատարես բուանդամական պարտավորությունը հանդեպ միությանը:

## Խ2 ԿԱՐԳՈՎ ԵՆ ԳԱՆՁՎՈՒՄ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԸ

Մինչ արհեստակցական միությունների համամիությունական 6-րդ համագումարը անդամագնարների գանձումը կատարվում եր ձեռնարկությունների և հիմնարկությունների գրասենյակների ի միջոցով. բանվորը ստանում եր իր աշխատավարձը, վորից առանց իր ցանկության պահպում եր միությանը հասանելիք տոկոսները, անպես փոր առանց իր ցանկության նա համարվում եր միության անդամ: Արհմիությունների 6-րդ համագումարը սահմանեց անդամագնարների միանգամայն անհատական մուծման սիստեմը, ապա ուրեմն միության անդամ լինելը դարձեց միանգամայն կամովին:

Միության լուրաքանչչուր անդամ պետք է լինի այնքան գիտակից ու իր միության գոյության և աշխատանքների կանոնավոր վարման ինդիբներով այնքան շահագողոված, վորպեսզի յուրաքանչչուր ամիս աշխատավարձը ստանալուց հետո միանգամայն կամովին մուծի միության կազմակերպությանը իր անդամագնարները:

Այս հանդամանքն ունի նաև այն խոշոր նշանակությունը, զոր միությունական մարմնին պարտավորեցնում ե լինել ավելի հոգատար միության անդամների կարիքների ու պահանջների սպասարկման ու բավարարման ինդիբներում, քանի վոր հակառակ դեպքում բանվորը վորեկցե կարիք միության շարքերում մնալու չի զգալ:

Ներկայիս անդամակցական վճարները գանձվում են հավաքարարների կողմից միության անդամի աշխատավարձի  $2^0/0$ -ի չափով: Աշխատավարձի մեջ չի հաշվում (ապա ուրեմն այդ գումարներից անդամագնար չի գանձվում) միությունից և Սոցավից տրվելիք նպաստները, հիվանդության ժամանակ Սոցավից ստացած աշխատավարձը լուծարվային գումարը, որպահնիկները և այլն:

Հիվանդության, գործազրկության, կրծատման կամ հեռացման ժամանակ բանվոր ծառայողը ընկնում ե տնտեսական վատ դրության մեջ և կարիք ե զգում ողնության, ապա ուրեմն միանգամայն հառկանալի լե, վոր

Նման գեպքերում միությունը վոչ թե չի վերցնում անդամագնալներ, այլ շատ զեպքերում ինքն ե գալիս ոգնության, տալով գործադուրկին նպաստ, հիվանդին իր հաշվին ուղարկելով սանատորիա, հանգստյան տուն և այն:

Գաճաճած անդամագնալները հավաքարարի մոտ չպետք ե յերկար մնան, այլ 5 որվա ընթացքում պետք ե մուծվի միություն կամ նրա ընթացիկ հաշվին.

### ՄԻՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԿԱՐԳԸ.

Միությունական բոլոր միջոցները ծախսվում են բառ կազմված նախահաշվի, վորտեղպետք ե նախատեսնել գալիք նախահաշվային շրջանում լենթադրվելիք բոլոր ծախսերը, կապելով այդ աշխատանքի ծրագրի հետ:

Նսխահաշվիը վերադաս արհկազմակերպության կողմից հաստատվելուց հետո պետք ե ղեկավարվել վերջինիս կողմից հաստատված գումարներով, տեղիք չտալով վորելից գերածախսի, թեպետ նա լինի աննշան գումարի:

Միությունական նախահաշվները կազմելու ժամանակ պետք ե հետեւել, վորպեսզի վերադաս արհմարմինների տված գիրեկտիվները ապարատի պահպանման ծախսերի կրճատման վերաբերյալ իրոք վոր կատարվի:

Միությունական ստորին կազմակերպությունների (գործարկոմ, բանկոմ, շախտկոմ—տեղկոմ, արհկազորություն և այլն) ապարատը

պահպանվում ե վոչ թե ի հաշիվ անդամակցական վճարների, այլ նրա պահպանման համար գործարանի հիմնարկի վարչությանը յուրաքանչյուր ամիս հավաքական պայմանագրերով նախատեսնված հատկացումները (աշխատավարձի 1/2, 1 կամ ավել տոկոսի չափով) ե անում գործարկումին. այս գումարներն ես ծախսվում են կազմված ու վերադաս արհկազմակերպությունների կողմից հաստատված նախահաշիվներով, նախահաշիվների կիրառման գործին վերստուգիչ հանձնաժողովները պետք ե դարձնեն մաքսիմալ ուշադրություն:

### ՊԱՀԱՆՁԵՔ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ՄԱՍԻՆ.

Միությունական յուրաքանչյուր կազմակերպությունն պարտավոր ե պարբերաբար ներկայացնել հաշվետվություն իր ստացած գումարների ծախսման մասին:

Նման հաշվետվություն սիությունական մարմինը պարտավոր ե ներկայացնել թե վերադաս արհկազմակերպությանը և թե իր կազմակերպության միությունական մասսալին:

Միության յուրաքանչյուր անդամ պետք ե իմանալ թե ուզ են գնում միության միջոցները, ինչ նպատակի յեն ծախսվում. ղեկավարվում ե արդյոք կազմակերպության ընտրած մարմինը վերադաս արհմարմի կողմից հաստատված նախահաշվով թե վոչ և այն: Անհրաժեշտ ե ընդ-

հանուր ժողովներում ֆինանսական հաշվետվություններ ներկարացնելու ժամանակ լսել նաև վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը, արդ զեկուցումներից բացի ունեցած յելքի ու սուտքի վերաբերյալ պետք ե կազմում միության անդամների միանգամայն հասկանալի հաշվետվություն և փակցնել գործարկումի տախտակին, Ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելիս լինի դա գրավոր թե բանավոր գործարկումներն ու գավառչությունները պետք ե տան արդ միանգամայն հասկանալի լեզվով, խուսափելով հաշվապահական տերմիններ գործածելուց:

Ֆինանսական հաշվետվությունները լսելու և քննելու միջոցով ե, զոր միությունական մասսան հնարավորություն և ունենում հսկելու և դատելու իր կազմակերպության ֆինանսական գործունեյությունը. դրա հետ միասին միությունական կազմակերպությունը ստանում ե միության մասսայի կարծիքը այն մասին, թե վոր չափ ե իր ֆինանսական գործունելությունը վարդում ճիշտ, և բավարարում ե արդիոք նա միության մասսալին թե վոչ:

## ԻՆՉԻ ՎՐԱ ՅԵ ԾԱԽՍՎՈՒՄ ՄԻՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Հայաստանի բոլոր արհմիությունները 1927 թ. ընթացքում անդամակցական վճարներից և այլ լեկամուտներից ստացել են ընդամենը 431,642 ռ.,

հարց ե առաջանում ուր և ինչնպատակների լեն ծախսվել այդ բավականին խոշոր գումարը:

Միությունները վարում են չափազանց խոշոր և բազմազան աշխատանքներ, նրանք սպասարկում են միության անդամների կուլտուրական կարիքները, կազմակերպում և պահպանում են ակումբներ, կինոներ, մատակարարում են գրադարանները գրքերով, կազմակերպում են խմբակներ և այլն և այլն:

Միությունը գործազրկության ժամանակ անդամներին նպաստներ ե տալիս, ցույց ե տալիս իրավաբանական ոգնություն, միության անդամներին և իր միջոցների հաշվին ուղարկում ենանատորյաներ, հանգստյան տներ և այլն. բացի այդ կարգավորում և ղեկավարում ե միության աշխատանքները տեղերում և այլն:

Այս աշխատանքները տանելու համար միությունը պահում ե վարձովի ապարատ. 1927 թ. ընթացքում հայաստանի բոլոր միությունները սեփական միջոցներից (միության լեկամուտները) ծախսել են ընդամենը 428,976 ռ. այդ թվում ծախսվելել՝

- ա) Ապարատի պահպանման վրա . . . 206,765 ռ. կտր 48,2%  
բ) Կազմակերպչական ծախսեր . . . 34,865 ռ. « 8,1%  
գ) Վարչա-տնտեսական ծախսեր . . . 37,207 ռ. « 8,8%  
դ) Գույքի գնման և այլ ծախսեր . . . 23,863 ռ. « 5,6%  
յե) Հատկացումներ մոնղերին . . . 111, 370 ռ. « 25,0%  
զ) Գոտացիա միության մարմ. 14,906 ռ. « 3,4%

1928 թվականին այս գրությունը միանգամայն փոխվում ե, այն ժամանակ, լերը բոլոր

արհկազմակերպությունները բացի ՀԱՄԽ.ից  
հիշյալ նպատակների համար ծախսել են ընդա-  
մենը 483.636 ռ., վորը կազմում ե 1927 թ.  
կատարած ծախսների հանդեպ 112,7% կամ  
ավել են ծախսել 54.660 ռ., ծախսերի առան-  
ձին հողվածները տալիս են հետեւյալ պատկերը.

ա)	Ապագարատի պահպանման վրա . . .	210,359 կամ 43,5%
բ)	Կաղմակերպչական ծախսեր . . .	52,613 € 10,8%
գ)	Վարչատնտեսական . . .	30,827 € 6,4%
դ)	Գույքի գնման և այլ ծախսեր . . .	36,756 € 7,6%
յե)	Հատկացումներ ֆոնդերի . . .	140,507 € 29,4%
դ)	Դռուցիա միութ. ստորին մարմ. .	12,574 € 2,3%

Յեթե հիշյալ բոլոր ծախսերը բաժանելու  
լինենք միությունների բոլոր անդամների վրա,  
կտանանք, վոր միության լուրացանչուր ան-  
դամի վրա ծախսվել ե՝

1927 թ. 1928 թ.

ա)	Անձն. կաղմի պահպ. համար 4—32 կ.	4—01 կ.
բ)	Կաղմակերպչական . . .	—77 կ.
գ)	Վարչատնտեսական . . .	—82 կ.
դ)	Գույքի գնման և այլ ծախսեր —53 կ.	70 կ.
յե)	Հատկացումներ ֆոնդերի 2—50 կ.	2—68 կ.
դ)	Դռուցիա միութ. ստոր մտ. —33 կ.	24 կ.

1929 թ. ընթացքում յեկս ապագարատի  
պահպանման ծախսերը իջել են, սակայն համա-  
պատասխան թվեր մենք կարող ենք բերել մի-  
միայն գալիք տարվա առաջի լեռամայակում:  
Յեկ չնայած նրան, վոր ինչպես 1928 թ. նույն-  
պես և 1929 թ. ընթացքում ապագարատի  
պահպանման ծախսերը իջել ե, այնուամենա-

նիվ ունեցած նվաճումները պետք ե համարել  
աննշան. ներկայիս կենտրոնական վարչություն-  
ները 1930 թվի նախահաշիվները կազմելիս  
պետք ե ամեն կերպ աշխատել ել ավելի իջեց-  
նելու ապագարատի պահպանման ծախքերը:

Այդպիսով 1926 թ. ընթացքում միություն-  
ները մեկ անդամի համար ստացել են ընդա-  
մենը 8 ռ. 34 կ., ծախսել են 8 ռ. 77 կ.,  
1927 թ. յուրաքանչյուր մեկ անդամի համար  
ստացել են 9 ռ. 61 կ., ծախսել են 9 ռ. 24 կ.  
և 1928 թ. ընթացքում մեկ անդամի համար  
ստացել են 8 ռ. 38 կ. ծախսել են 9 ռ. 22 կ.:

Ավելորդ գումարները այս տարիների ըն-  
թացքում ծախսվել ե ի հաշիվ վերադաս արհ-  
մարմինների ստացած նպաստի և զանազան յե-  
կամուտների:

### ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԾԱԽԱՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱ- ՆՈՒԹՅՈՒՆԸ.

Միություններն իրենց աշխատանքների ըն-  
թացքում ձգտում են ըստ հնարավորին կրնա-  
տել ապագարատի պահպանման ծախսերը, վոր-  
պեսզի հնարավոր դառնա անդամավճարների  
խոշոր մասի վերադարձումը միության անդա-  
մներին, նրանց կուլտուրական պահանջները և  
անտեսական կարիքները հոգալու, գործազուրկ-  
ների նպաստի ավելացման միջոցով, միության  
անդամների սպասարկումը ակտումբի, գրադարա-

սական գործունեության և մասամբ աշխատաքնիերի լավ կամ վատ դրվածքի:

1927 թ. 1928 թ.

Անձնական կազմ .	206,765	կամ 58,8%	210,359	կամ 47,6%
Վարչա-անտեսակ .	37,207	« 10,5%	30,827	« 6,9%
Կազմակերպչակ .	34,865	« 2,5%	52,613	« 11,9%
Դուրքի գնման և այլ	23,863	« 6,7%	36,756	« 8,3%

Այս աղյուսակից յերեվում ե, վոր անդամակցական մուծումների խոշորագույն մասը դեռ յեփս ծախսվում ե ապավարատի պահպանման վրա, չնայած նրան, վոր անձնական կազմի և վարչա-անտեսական ծախսերի տոկոսները իջնում են և յերկրորդ, վոր որսովուա ոռորիներով ապավարատը ավելի շատ ե կլանել 28 թ. քան 27 թվին։ Այսուղ կարող են առարկել, վոր միության անդամների թիվը զգալիորեն աճել ե և ըստ այնմ ծախսերն ել աճել են, այս ռուարկությունը պետք ե համարել անհիմն, քանի վոր միության անդամների թվի աճումը դեռ չի նշանակում միութենական սարմինների ցանցի լայնացում և ըստ այնմ ազատված աշխատողների թվի մեծացում, այլ պահանջում է գորություն ունեցող մարմինների աշխատանքների լավացումը և այդ մարմինները սիութենական մասսալին մոտեցնելը։

Վերը բերած թվերը միջին են բոլոր միությունների համար. առանձին միություններում դրությունը ավելի վատ ե այն իմաստով, վոր անդամներական վճարների խոշորագույն մասը

նի, իրավաբանական ոգնության լավացման և ալ խնդիրների կարգավորման միջոցով։

Հիմնավորելու համար վերոհիշյալը, համեմատենք 1926 և 1927 թ.թ. ի միությունների ֆինանսական գործունեության մի քանի տվյալները. 1926 թ. միության ապավարատի պահպանման վրա ծախսվել ե ընդհանուր ծախսերը 51, 3%/<sub>0</sub> և 27 թ. այս տոկոսն իջել ե 48, 2%/<sub>0</sub> իսկ 28 թ. — 43,5%/<sub>0</sub>, վարչա-անտեսական կազմերի համար 26 թ. ծախսվել ե 9,6%/<sub>0</sub>, 27 թ. 8,8%/<sub>0</sub>, 28 թվին — 6,4%/<sub>0</sub>, կազմակերպչական աշխատանքների վրա 26 թ. ծախսվել ե ընդհանուր միջոցների 10,4%/<sub>0</sub>, 27 թ. 7,1%/<sub>0</sub>։

Չնայած այս նվաճումների, ապավարատի պահպանման վրա ներկայիս ծախսվող միջոցների չափը պետք ե համարել խոշոր և ըստ այնմ ել գրությունը անբավարար։

Միութենական մարմինների ծախսերի առանձին հոդվածները մենք համեմատեցինք ծախսքերի ընդհանուր գործարի հետ, այժմ տեսնենք թե անձնական կազմի ընդհանրապես տպապարատի պահպանման վրա միությունների կողմից ստացվող անդամակցական վճարների վոր մասն ե ծախսվում, վորովհետև այս գրությունը այն ցուցանիշներից մեկն ե, վորը բնորոշում ե ապավարատների կազմակերպվածության, ֆինա-

ծախսվում ե անձնական կազմի վրա, ապացուցենք թվերով՝

Ասդամակցական վճարների վոր տոկոսն ե  
ծախսվել միությունների անձնական կազմի պահ-  
պանման վրա.

		1927 ₥.	1928 ₥.
1.	Գյուղանտառ . . . . .	138,2 <sup>0</sup> /₀	64,6 <sup>0</sup> /₀
2.	Հանքագործներ . . . . .	89,6 «	38,3 «
3.	Փալտագործներ . . . . .	84,6 «	57,1 «
4.	Կաշեգործներ . . . . .	72,5 «	74,8 «
5.	Մետաղագործներ . . . . .	64,2 «	44,7 «
6.	Տպագրիչներ . . . . .	53,3 «	44,9 «
7.	Սնունդ համի . . . . .	83,3 «	56,9 «
8.	Մանածագործներ . . . . .	74,3 «	32,4 «
9.	Կարողներ . . . . .	96,8 «	116,2 «
10.	Կառուցողներ . . . . .	27,4 «	34,7 «
11.	Փոխագրողներ . . . . .	63,2 «	66,8 «
12.	Ժողկապի . . . . .	58,3 «	50,0 «
13.	Գեղաշխի . . . . .	64,2 «	64,3 «
14.	Բժշկասանիտարական . .	49,5 «	42,2 «
15.	Լուսաշխի . . . . .	56,0 «	48,2 «
16.	Խորառժառի . . . . .	50,6 «	40,8 «
17.	Կոմմունալնիկներ . . . .	86,0 «	66,2 »
18.	Ժողկապի . . . . .	95,2 «	78,7 «

Միութենական կազմակերպությունների  
հետագա աշխատանքների ընթացքում հարկավոր  
ե այսպես կազմակերպել իրենց աշխատանք-  
ները, վորպեսզի նաև եժանացվի ապահատը  
և յերկրորդ կրծառվեն ազատված աշխատող-  
ների թիվը, հասարակական աշխատանքների  
կարգով, առանց վարձատրության, միութ. մար-  
մինները, կոնկրետ՝ կենտվարչությունները և  
Գավկարչությունները նորանոր աշխատող կադ-  
րեր առաջ քաշելով, —

Հնդհանրապես միութենական ապաբարատի  
վրա կատարվելիք ծախսերը նորմալ են համար-  
վում, յերբ այդպիսին կազմում ե վոչ ավել-  
քան անդամավճարների 39-ից մինչ 45°/₀-ը. հենց  
այդ իսկ տեսակետից վերը բերած միություն-  
ներից մոտ տասը, (ընդգծված են) ապաբարատի  
վրա ծախսվում են խոշոր գումարներ: այս հան-  
գամանքը ավելի նշանակալից ե դարձնում  
միութենական մարմիններում հասարակական  
աշխատանքների կարգով «կամավոր» վոչ վար-  
ձովի աշխատողների առաջ քաշման:

Այս պրոբլեմը նոր ե ինչ արհմիություն-  
ների առաջ դրվում ե վորպես անհետածգելի և  
կարեվոր նշանակություն ունեցող պրոբլեմ։  
Ժամանակն ե ձեռնարկելու ժիշտալ խնդրի կեն-  
սագործմանը։

14940-57 а. ТОШУРЧАС  
Публичная библиотека

Ապագարատի պահպանման ծախսերի իջեցման հետ միասին բարձրացել ենակ միությունական ֆոնդերին անդամավճարներից տրվելիք հառկացնումների չափը՝ 1926 թ. ընդհանուր միջոցներից գործազուրկների, կուլտ կրթական, սանատորակուրորտային և այլ ֆոնդերին առվելեցնամենը  $21,1^0/0$  հատկացում, 1927 թ. ֆոնդերին արված հատկացումների չափը հավասար է  $31,6^0/0$ . իսկ 1928 թ.  $31,8^0/0$  (ինչպես 26, նույնպես 27 և 28 թ. հատկացումների մեջ մտնում են նայել անդամավճարներից միջմիութենական մարմիններին արկելիք հատկացումները):

1926 թ. ֆոնդերին արված հատկացումները յեթե բաշխելու լինենք միության անդամների վրա կստանանք, վոր 1926 թ. լուրաքանչյուր անդամի համար ֆոնդերին արվել ե հատկացում 1 ռ. 77 կ., այն ինչ 27 թ. այդ գումարը հավասար ե 2 ռ. 50 կ. իսկ 28 թվին—2 ռ. 68 կ.։

Ինչպես ցուց են տալիս թվերը, միմիայն մեկ տարվա ընթացքում ֆոնդերին արվելիք հատկացումների չափն ավելացել ե հանդեպ յեկամուտների ընդհանուր գումարի  $57,1^0/0$ : Այս թվերը միջինն ե զուրս բերված միությունների համար, առանձին միություններում դրությունը հետեւյալն ե.

Անդամակցական վճարներից ֆոնդերին արված հատկացումների չուփը. —

		1927 թ. որսովուած (ոուրինն.)	առկոս- ներով	1928 թ. որսովուած (ոուրինն.)	առկոս- ներով
1.	Գյուղանտառ . . .	3.420	10,8	11,302	16,7
2.	Հանքագործներ . . .	1.898	19,5	8,233	30,4
3.	Փարագործներ . . .	215	10,3	1,530	28,7
4.	Կաշեգործներ . . .	342	10,0	388	10,0
5.	Մետաղագործներ . . .	530	6,9	937	6,1
6.	Տպագրիչներ . . .	2.163	38,3	2,842	40,7
7.	Սնունդ համի . . .	1.552	13,8	2,436	16,2
8.	Մանածագործներ . . .	821	5,5	6,019	45,7
9.	Կարողներ . . .	—	0,0	52	2,4
10.	Կառուցողներ . . .	51.477	64,9	40,224	47,9
11.	Փոխադրողներ . . .	2.214	20,1	2,749	27,2
12.	Ժողկապի . . .	1.846	36,0	1,821	32,7
13.	Գեղաշխի . . .	1.006	19,1	1,075	19,4
14.	Բժշկասանիտարակ.	7.514	29,6	11,242	37,6
15.	Լուսաշխի . . .	12.669	25,3	17,625	31,9
16.	Խորածառ . . .	21.209	29,2	29,729	36,5
17.	Կոմմունալիկներ . . .	1.693	21,9	1,794	18,0
18.	Ժողկապի . . .	801	9,9	509	11,1

Այս աղյուսակից պարզ հետեւյալ ե, վոր միմիայն մի քանի միություններ են վոր անդամակցական մուծումների զգալի մասը հատկաց-

նում են ֆոնդերեն յեթե վերը բերած տոկոսներից հանենք  $10^{\circ}/_0$ , վորպիսինը մինչ այս տարվա սկիզբը պարտադիր կերպով միությունները հատկացնում ելին միջմիութենական կազմակերպությունների ֆոնդերին արվող հատկացումների շրջը ավելի կապասի, այն ինչ նորմալ պետք է համարել այն դրությունը, իերը անդամակցական մուծումների խոշորագույն մասը հատկացվում է ֆոնդերին:

Չնայած նրան, վոր 28 և 29 թվին այս ասպարեզում մեր միություններից շատերը ունեցել են մի շարք նվաճումներ, այնումնայնիվ ներկայիս դրությունը պետք է համարել վոչ բավարար:

Արհմիությունների 7-րդ համագումարը միությունների ֆինանսական բաղաքականության վերաբերյալ տվել ե հետեւյալ դիրեկտիվը՝ «Արհմիությունների հետագա ֆինանսական քաղականությունը պետք է պարունակվի նրանում, վորպեսզի հետաքալում անդամակցարների խոշորագույն մասը վերադարձվի միության անդամներին նրանց կուլտուրական պահանջները և տնտեսական կարիքները հոգալու միջոցով»; Այս այս նշանաբանի ներքու ին, վոր միությունական մարմինները վարուժ են և պետք է վարեն իրենց ֆին անսական բարգաքականությունը,

### ԴԻՖԻՑԻՏԱՅԻՆ ՄԻՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Մեր միություններից մի քանիսը առ այսոր տարեկան հաշվետվությունը փակում են դեֆիցիտով: Առ 1-ն հունվարի 1927 թվի այդ միություններին են պատկանում Գյուղանտառը Հանքագործները, Մհատաղագործները և Լուսաշիքը, դեֆիցիտի ընդհանուր գումարը այդ միություններում հավասարվում եր 14062: Վերջին յերկու տարվա ընթացքում փոխանակ դեֆիցիտով հաշվետվությունն փակող միությունների թիվը և դեֆիցիտի գումարը պակասելու, ընդհակառակը աճել է և առ 1-ն հունվարի 1928 թ. այդ միությունների թիվը դարձել ե 7, իսկ դեֆիցիտի ընդհանուր գումարը հավասարվել ե 18.154 ռուբլու: Ներկա պայմաններում, յերբ որեցեր աճում է միությունների անդամների թիվը, բարձրանում է նրանց աշխատավարձը, ապա ըստ այնմ ավելանում է անդամակցական վճարների ընդհանուր գումարը. այս դրությունը պետք է համարել միանդամայն աններելի: Հետաքրքրական ե այն, վոր այդ միությունների շարքերին են պատկանում մեր խոշոր միությունները, վորոնք յերբեք դեֆիցիտով չպետք է փակեն իրենց հաշիվները:

Առ 1-ն հունվարի 1929 թվի դեֆիցիտը ունեցաղ միություններին են պատկանում:

Գյուղանտառի դեֆիցիտը ընդհանուր գումա-

բով 6719 ռ. Լուսաշխ - 7317 ռ. Տպագրիչներ  
— 1177 ռ. Խորառծառ — 1582, Մանածագործ-  
ների — 197 ռ. Փողոնունդ = 418 ռ. Փոխադրող-  
ների — 773 ռ. Խնչակես 1929 թվի, նույնպես և  
գալիք տարվա ընթացքում միությունները պետք  
ե ձեռնարկեն բոլոր միջոցները վերացնելու  
իրենդ դիմումները և տարեկան ֆինանսական հա-  
շվետվությունները փակելու առանց արդպիսի-  
ների:

### ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ՊԱՅՔԱՐԸ ՎԱՏՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Վերստուգիչ հանձնաժողովները պետք ե հսկեն  
միությունական միջոցների ուղիղ ծախսման  
վրա, հետեւվելով, վորպեսզի յուրաքանչյուր  
կոպեկ ծախսվի իր նպատակին, տեղիք չտրվի  
վատնումների և այլն:

Վերստուգումը և ֆինանսական հսկողու-  
թյունը պահպանում են միությունական միջոց-  
ները վատնումներից: Վատնումները արհեստա-  
կցական միությունների կյանքում ամենախոշոր  
չարիքն ե, բացի դրանից միությունական մի-  
ջոցների վատնումը բանվորների աշքում քցում  
ե միության հեղինակությունը ու վերջինս կո-  
րցնում է բանվորների կողմից սինչ ույղ վա-  
յելած վատնությունը:

Հայաստանի արհեստակցական միություն-  
ներում 1927 թ. հունվարից առ 29 թ. հունիսի

մեկը տեղի յե ունեցել 84 վատնումների դեպք  
— 13.222ռ.73 կ. գումարով:

Առանձին միությունների գծով թե վատ-  
նումների գեպքերը և թե վատնած գումարների  
չափը տարբեր ե, այսպես որինակ՝ վատնումների  
ամենախոշոր գումարը տեղի յե ունեցել փո-  
խադրողների միության գծով:

Այս չարիքի դեմ միությունական մարմին-  
ները վարում են ամենախիստ պայքար. վատ-  
նողներն անմիջապես հանվում են աշխատանքից  
և հանձնվում դատարանին:

Թե վերստուգիչ հանձնաժողովները և թե  
միությունական մարմինները գումարների պահ-  
պանման, գանձման ու ծախսման այնպիսի  
պալմաններ պետք ե ստեղծեն, վորպեսզի ցան-  
կության դեպքում ևս անհնար լինի կատարել  
վորյեվիցե վատնում: Այդ իսկ տեսակետից խո-  
շոր ուշադրություն պետք ե դարձնել ֆինան-  
սական հաշվետվությունները ժամանակին տա-  
լու գործի վրա:

Միության յուրաքանչյուր կոպեկ պետք ե  
ժամանակին մուտք գրել, յուրաքանչյուր ծախս  
պետք ե ունենա իր փաստաթուղթը, վորպես կա-  
նոն. միությունական դրամները պետք ե պահպեն  
խնայողական դրամարկղներում, բանկերում:

Ֆինանսական գործերում, դրամական հա-

շիվներում անձնական վստահությունն յերբեք  
չպետք ե տեղ ունենա:

Վատնումների դեմ հաջող պարագալու հա-  
մար խոշոր նշանակություն ունի գանձապահ-  
ների աշխատանքների կարգավորումը. միու-  
թյունական մարմնի գանձապահն ե, վոր իր  
աշխատանքների կարգավորման միջոցով կան-  
խում ե վատնումները:

Միությունական միջոցների վատնումների  
համար պատասխանատվության ե յենթարկվում  
վոչ միայն վատնողը, այլ նրա հետ միասին  
նաև միությունական միջոցների կարգադրիչը  
(գործարկումի նախագահ, քարտուղար, կենտվա-  
րչության նախագահ) վերստուղիչ հանձնաժողով  
և այլն:

Վատնումների դեմ մինչ այժմ ձեռնարկած  
միջոցները պետք ե համարել տնբավարար. պայ-  
քարը հաջող կընթանա և վատնումներն իսպառ  
կվերանան, յեթե այդ գործին լծվի միության  
լուրաքանչյուր անդամ: Այս վերջինը այն գրա-  
վականն ե, առանց վորի խոսել վատնումների  
դեմ հաջող պարագաների մասին յերբեք չի կարելի:

Միության լուրաքանչյուր անդամ պետք ե  
հետաքրքրվի միության ֆիսանսական գործու-  
ներությամբ ու իր անմիջական մասնակցությամբ  
կաշդավորի միության ֆինանսները

ՀՀ Ազգային գրադարան



NL0202917

**В Ю Г О**

Как и на что расходуются  
членские взносы в проф-  
союзах



Совет Федерации профсоюзов СССР